

## Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն


“ՍՐԲՈՑ ԹԱՐԳՍԱՆՉԱՅ — ԴՈՒՐԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿ,,Ի

Երջանկայիշատակ Տէր Եղիշէ Ս. Պատրիարք Դուրեանի Բահանայութեան Յիսնամեայ Յօրեւեանին առթիւ, 1929ին, կարգ մը Պատուական ազգայնոց նուիրատուութեամբ գոյացած էր շուրջ 3000 Պ. Ոսկիի գումար մը:

Հոգելոյս Սրբազանին այդ առեւնէն յայտնած փափաքին համեմատ, իր վախճանումէն յետոյ, Տնօրէն Ժողովոյ կողմէ կարգուած Յանձնաժողովի մը հսկողութեան ներքեւ, այդ գումարը, 1931ին, վերածուեցաւ հասութարեր կալուածի մը, որ, ի յարգանս յիշատակի Հանգուցելոյն՝ ձրխարար տրամադրուած վանքապատկան գետնի մը վրայ տարիէ մը ի վեր, կառուցուած է արդէն Ս. Բազաքիս «Աթօր» յորջորջուած պողոտային եզերքը, ԴՈՒՐԵԱՆԱՇԷՆՆ անուամբ, և որ այժմ հասոյթ կ'արտադրէ տարեկան աւելի քան 400 Պաղեստինեան Լիրա:

Ինչպէս Լուսահոգւոյն բացօրոջ իր ձն էր, Տնօրէն Ժողովը որոշեց որ այդ կալուածին տարեկան ամբողջ հասոյթը մասնական սահմանումներով յատկացուի Ս. Աթոռոյս հովանւոյն տակ իրազործելի գրական-հրատարակչական ձեռնարկներու, այսինքն, տպագրութիւն «ԴՈՒՐԵԱՆ, ՄԱՏԵՆԱԴՍՐԱՆ» տրագոսին ներքեւ կազմուելիք հայազխտական ուսումնասիրութեանց շարքի մը, հրատարակութիւն նախնեաց զխաւորարար անտիպ գործերու, զնում Ս. Աթոռոյս ձեռագրաց և տպագրաց զայդ Մատենագորաններուն համար հարկաւոր դատուած զըջակիր և տպեալ մատեններու և պարբերական հանդէսներու և այլն:

Նկատի առնուելով, զարձեալ, որ բարեյիշատակ Յովսէփ Իզմիրեանցի Գրական Մրցանակը, Կ. Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանի հովանաւորութեան ներքեւ 1886էն մինչեւ 1914 գործադրուելէ վերջ, ծանօթ պարագայից բերմամբ զաղրած է տասնեւութ տարիներէ ի վեր, թէ՛ այս զաղարման հետեւանքով յառաջ եկած պակասը լրացնելու և թէ՛ զրազէտ և բանասէր Պատրիարքին յիշատակին մեծարանք մը ևս բնծայելու մտածութեամբ, Տնօրէն Ժողովը, բնգառաջ երթալով այս մասին յայտնուած փափաքին, ԴՈՒՐԵԱՆԱՇԷՆՆի հասոյթէն առ այժմ տարեկան 60 Ոսկւոյ սահմանումով հաստատեց նոր Գրական Մրցանակ մը, նման Յովսէփ Իզմիրեանց Մրցանակին, և, այս վերջնոյն համար Կ. Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանէն 1901 Ապրիլ 28ին հրատարակուած Հրահանգին նմանողութեամբ հետեւեալ կերպով կարգադրեց այդ Մրցանակին պայմանները:



Ա. — ԳՈՒՐԵԱՆԱՇԷՆ-ի հասոյթին մէկ մասով հաստատուած այս Մըրցանակը կը կոչուի ՍՐԲՈՅ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ — ԳՈՒՐԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿ, յանուն եւ ի պատիւ Սրբոյ Թարգմանչաց Վարդապետացն Մերոց եւ նոցա արժանաւոր հեռեղ Երանաւորն Տ. Եղիշէ Գուրեան Ս. Պատրիարքարանին Ս. Արուոյս:

Բ. — Այս Մըրցանակը կը տրուի և կը հրատարակուի իւրաքանչիւր երկու տարին անգամ մը, Սրբոյ Թարգմանչաց Տօնին յաջորդող Կիրակի օրը, Հոկտեմբեր ամսոյ ընթացքին, Հայոց Երուսաղէմի Պատրիարքարանին մէջ:

Գ. — Սոյն Մըրցանակի հոգաբարձութեան գործը պիտի կատարուի Ս. Աթոռոյս Աւսումնական Խորհուրդին կողմէ, որ այդ մասին պիտի գործէ Գրական Յանձնաժողովոյ հանգամանքով:

Դ. — Մըրցանակին նպատակը լինելով հայադիտական գրականութեան մըշակութեան քաջաշէն եւ օղնէլ նոյն ատեն անոնց որ այդ մասին մտաւորական ձեռնհասութիւն ունենալով հանդերձ կը կարօտին նիւթական աջակցութեան, այս երկու կէտերը միանգամայն նկատուի պիտի աւելնին ներկայացուած գործերու ընդունելութեան միջոցին:

Ե. — ՍՐԲՈՅ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ — ԳՈՒՐԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿի նիւթը պէտք է ընդգրկէ ամբողջ հայադիտութիւնը, այսինքն հայ ազգի պատմութեան, հնախօսութեան և աշխարհագրութեան, գեղարուեստի, Հայաստանեայց Եկեղեցւոյ պատմութեան, գաւառաբանութեան և իրաւագիտութեան, Հայերէն հին և նոր լեզուի և գաւառաբարբառներու գիտութեան, և գրականութեան վերաբերեալ բանասիրական և քննարանական հետազօտութիւններ, հին հայ մատենագիրներու աշխարհագրի վերածում՝ հանդերձ ներածական ուսումնասիրութեամբ և լուսարանող ծանօթագրութեամբ, հայ գաղութներու և հայ Երուսաղէմի մասին պատմաքննական հետազօտութիւններ, նշանաւոր ազգայնոց կենսագրութիւններ, ազգային և տեղական հին և նոր կեանքէ քաղուած բանասիրական և քերթողական յօրինուածներ, և այլն:

Զ. — Մըրցանակի չեն կրնար ներկայացուիլ.

1. — Օտար լեզուներէ թարգմանուած աշխատութիւններ.
2. — Հասարակ Գասօգիրքեր.
3. — Անգամ մը արդէն վարձատրուած երկեր.
4. — Հին Մատենագրութեանց պարզ տպագրութիւններ.
5. — Ամբողջութիւն չկազմող կամ շարունակութիւն եղող գործեր.
6. — Արդէն իսկ տպագրեալ գործեր.
7. — Հայ Ազգի և Եկեղեցւոյ և Քրիստոնէական կրօնի դէմ ուղղակի կամ անուղղակի հակառակ ուժով գրուած երկեր:

Է. — Մըրցանակի ներկայանալի երկասիրութեանց նիւթը կրնայ կանխաորոշուիլ Գրական Յանձնաժողովոյ կողմէ, եւ Մըրցանակի թուականէն զոնէ տարիուկէս ասաջ հրատարակուիլ, կրնայ եւ ազատ թողուիլ վերոյիշեալ ընդհանուր գիծերու շրջանակին մէջ, եւ նոյն պայմանաժամին ըստ այսմ օրոշակի յայտարարուիլ:

Ը. — Մըրցանակին չեն կրնար մասնակցիլ Գրական Յանձնաժողովոյ անդամները:

Թ. — Ներկայացուած գործերը պէտք է ըլլան հայերէն, նախընտրօրէն աշխարհարար: Անոնք նամակաւ պիտի յղուին Երուսաղէմի Սրբազան Պատրիարքին, մեքենագրեալները՝ երկուական, իսկ ձեռագիրները մէկ մէկ օրինակ, բայց յստակ գրուած: Յղուած երկեր, մրցանակ ընդունին կամ ոչ, եւ չեն գարձուիր:

Ժ. — Մրցանակի ներկայացուած երկասիրութիւններ պէտք է ըլլան բաւական ընդարձակ աշխատութիւններ, նիւթի, գիւտի եւ գրական Պատուելութիւններով չխաղած, եւ անձնական ու նոր սուսուժնասիրութիւններով, պատրաստուած:

ԺԱ. — Այս պայմաններուն համեմատ պատրաստուած գործերը պէտք է որ Մրցանակի թուականէն զոնէ հինգ ամիս առաջ հասած ըլլան Երուսաղէմի Սրբազան Պատրիարքին, որպէսզի կարենան ըստ արժանւոյն քննութեան ենթարկուիլ, հակառակ պարագային նկատի կ'առնուին հետագայ Մրցանակաբաշխութեան մը առթիւ:

ԺԲ. — Գրական Յանձնաժողովը կը կատարէ ներկայացուած երկասիրութեանց նախաքննութիւնը, եթէ Մրցանակի պայմաններուն համաձայն զոնէ, յատուկ քննութեան համար կը յանձնէ զանոնք ձեռնհաս անձերու, եւ անոնց տեղեկագիրն ընդունելով քննութիւնը լրացնելէ վերջ, մրցանակը կ'որոշէ վերջնաբար: Որոշումը կը հիմնուի թէ՛ բացարձակ եւ թէ՛ համեմատական արժանիքի վրայ:

ԺԳ. — Իւրաքանչիւր երկամեակի Մրցանակի պարգեւն է (120) հարիւր քսան Պաղեստինեան Լիրա (կամ Սթէրլին), որ կրնայ ամբողջովին տրուիլ, եթէ ըստ այնմ արժէքաւոր երկ մըն է ներկայացուածը, ապա թէ ոչ երկու կամ տւելի մրցանակներու կը բաժնուի, հաւասար կամ տարբեր աստիճաններով:

ԺԴ. — Եթէ Մրցանակաբաշխութեան պայմանաժամին մէջ որ եւ է աշխատութիւն չներկայացուի, կամ ներկայացուածներն մրցանակի ջարժանի կամ մրցանակի ամբողջութեան արժանի չնկատուին, պարզեւի գումարը կամ գումարին մասը կրնայ բարգուել ԳՈՒՐԵԱՆԱՃԵՆ-ի տարեկան հասոյթէն՝ առնուած այն մասնական գումարին վրայ, որով կը տպագրուին «ԳՈՒՐԵԱՆ ՄԱՏԵՆԱԴՐԱՆ» տիպոգրօսին տակ հրատարակելի գործեր:

ԺԵ. — Յանձնաժողովը պարտաւոր չէ, իւրաքանչիւր Մրցանակաբաշխութեան առթիւ, քննիչներու անուններն ու տեղեկագիրները հրատարակելու, բայց ներկայացուած երկասիրութեանց եւ կատարուած քննութեան վրայ լիակատար տեղեկագիր մը կը ներկայացնէ Ս. Աթուոյս պաշտօնաթերթին միջոցաւ:

Ս. Արուոյս ՏԵՐԵՆ Ժողովէն վաւերացուած սոյն կանոնագրութիւնը կը յանձնենք Ռուսմական Խոհրդոյ, յանձնարարելով անոր գործադրութիւնը:

30 Մայիս 1933  
Երուսաղէմ

Պատրիարք Երուսաղէմի  
ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ